

- 40 Ընկալեալ Սարգսի զայն թրղթոց ծրար
Ընթերցեալ բզգիբս յոյժ ուրախարար,
Յայանէր Չափուշին զարքունեաց յետկար,
Որում եւս անտի յատուկ թուղթ ինչ կայր:
- 41 Չափուշն առեալ զայն զերթ պատգամաւոր
Տանէր առ տեղւոյն մեծ իշխանաւոր
Որում եւ յանձնէր զիւր կալանաւոր
Առ պահել անգէն մինչեւ պատուէր նոր:
- 42 Որ եւ յետ աւուրց ողջունեալ զՍարգիս
Ի կոստանդինեան դարձ առնէր Պօլիս,
Ուր եւ բաժանէր նամակս գոհալիս,
Գրբեալս ի Սարգսէ առ իւր սիրելիս:
- 43 Ապա մընացեալ Սարգիս անդ ապատ,
Պակասիւր անձին տըխրութիւն գանկատ,
Ուր յայտ կենակցեալ ընդ յոյնս կից եւ զատ,
Պատուիւր ի նոցունց սիրով յոգնառատ:
- 44 Այլ Յակոբ ըզնա ըսփոփէր թէպէտ
Ընծայիւք թրղթովք բանիւ յուսաւէտ,
Սակայն դարմանէր ի սրբտին յաւէտ
Խուն հեռ ինչ որ չէր Սարգսի շահաւէտ:
- 45 Եւ սուղ նախանձն այն թելադրէր ըզնա
Թողուլ ըզՍարգիս կապեալ մըշտակայ,
Վըտարեալ, պանդուխտ, յիւրոց տարակայ
Ի ծովապատ բանտ ցամաքին քիայ
- 46 Վասն այն յերբ ոմանք խնդրէին գիտել
Արդե՞ք Սարգսի զերծման յետկարն եւ,
Ասէր, թէ գեռեւս կայ այլ իմն արգել,
Զոր ջանամ բառնալ եւ անհետ առնել: